ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » մայիսի 2023թ. № 85-Ա

## ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-009-0055-0024 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշումով՝ հիմք ընդունելով Լյուբա Կառլենի Ներկարարյանի կողմից ներկայացված դիմումը, 22.12.2022թ. թիվ 2162 գրանցամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Գագիկ Մեսրոպյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0055-0024 կադաստրային ծածկագրով 0.219 հա բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝
ա/ Լոռի Բերդ համայնքի 06-009-0055-0024 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը 0.219 հա
բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.219 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Լյուբա Կառլենի Ներկարարյանին, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:
3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0055-0024 կադաստրային ծածկագրով 0.219 հա հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 106.29 քմ մակերեսով բնակելի տան,

50.95 քմ մակերեսով անասնաշենքի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել Լյուբա Կառլենի Ներկարարյանի սեփականության իրավունքը:
4. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք Ագարակ գյուղի 06-009-0055-0024 կադաստրային ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք, գյուղ Ագարակ, 8-րդ փողոց, թիվ 11 փոստային հասցեն:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

**2023թ. մայիսի 26**
**գ. Լոռի Բերդ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26 » մայիսի 2023թ. № 86-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0023-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լեջան, 14-րդ փողոց, բնակելի տուն թիվ 3 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

**2023թ. մայիսի 26**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29 » մայիսի 2023թ. № 87-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0030-0034 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լեջան, 17-րդ փողոց, թիվ 54 հողամաս փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2023թ. մայիսի 29
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 30 » մայիսի 2023թ. № 88-Ա

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 27-ի թիվ 58-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշումը, ինչպես նաև ԼոռիԲերդ համայնքի ավագանու 2023թ. փետրվարի 17-ի թիվ 11-Ա որոշումը՝

**որոշում եմ.**

1. Լոռի Բերդ համայնքի բնակիչներին համայնքի բյուջեից հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2023թ. մայիսի 30
գ. Լոռի Բերդ

Հավելված.

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի

2023թ. մայիսի 30-ի №88-Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Արուս Ժորայի Շահինյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Լեջան
2. Տիգրան Արթուրի Չոբանյան – 30.000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ագարակ
3. Արման Ռուդիկի Մելիքյան – 20.000 ՀՀ դրամ, 25-օրյա վարժական հավաքներին մասնակցելու կապակցությամբ, գյուղ Լոռի Բերդ
4. Բեգլար Հրաչիկի Սաքանյան - 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
5. Կարինե Հակոբի Ջիլավյան - 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ագարակ
6. Գայանե Գագոյի Մաթևոսյան - 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Կողես
7. Սուսանա Եփրեմի Ոսկանյան - 40.000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Լեջան
8. Աննա Լևոնի Մուրադյան – 40.000 ՀՀ դրամ, որդու՝ Սամվել Խորենի Ներսեսյանի մենթալ թվաբանության միջազգային օլիմպիադային մասնակցելու և 1-ին պատվավոր տեղը գրավելու կապակցությամբ, գյուղ Կողես
9. Լուսինե Համազասպի Սաֆարյան – 40.000 ՀՀ դրամ, որդու՝ Խաչիկ Բարսեղի Կիրակոսյանի բազկամարտի առաջնությանը մասնակցելու և 1-ին պատվավոր տեղը գրավելու կապակցությամբ, գյուղ Կողես
10. Անահիտ Սասունի Սահինյան – 40.000 ՀՀ դրամ, դստեր՝ Անժելիկա Շամիրի Բարսեղյանի՝ Հայաստանի Դուքենդո Ֆեդերացիա ոչ ուղեգրային բաց առաջնությանը մասնակցելու և քաթինյու մրցաձևում 1-ին պատվավոր տեղը գրավելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ
11. Տաթևիկ Հարությունի Պապյան – 40.000 ՀՀ դրամ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի բակալավրի առկա ուսուցման «Հագուստի մոդելավորում» մասնագիտության 2022-23 ուստարվա 4-րդ կուրսի «մոզ՝ 95.58» բարձր ցուցանիշներ ցուցաբերելու կապակցությամբ, գյուղ Ուռուտ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ